

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ-ի ռեկտոր, ք.գ.դ.

_____ Խաչատրյան Գ.Կ.

“__15__” _____03_____ 2013թ.

ԿԱՐԳ

**«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական
ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության սովորողների
ակադեմիական շարժունության**

Ընդունված է գիտխորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 2

“__07__” _____03_____ 2013թ.

I. Ընդհանուր դրույթներ

1. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում սովորողների ակադեմիական շարժունության» կարգով /այսուհետ Կարգ/ կարգավորվում են «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության /այսուհետ ՄՈՒՀ/ ուսանողների շարժունության, ներբուհական և բունից բուհ տեղափոխությունների գործընթացները:
2. Սույն Կարգի մշակման իրավական հիմքերն են ՀՀ «Կրթության մասին» օրենքը, ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքը, ՀՀ կառավարության «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 16-ի թիվ 938-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1240-Ն որոշումը /25.08.2011թ./:
3. Ըստ ուսման նպատակի կամ ժամանակահատվածի՝ սովորողների՝ բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով ուսումնառող, ակադեմիական շարժունությունը կարող է լինել որոշակի ժամկետով (այսուհետ՝ շարժունություն) կամ հիմնական (այսուհետ՝ տեղափոխություն):

II. Սովորողների շարժունությունը

4. Ակադեմիական շարժունությունն ուսանելու, հետազոտություններ կատարելու կամ որակավորումը բարձրացնելու նպատակով մեկ այլ ուսումնական հաստատությունում սովորողի կրթության շարունակումն է:
5. Սովորողների շարժունությունը չի հանգեցնում ուսման սահմանված ժամկետի ավելացմանը:
6. Ուսումնական հաստատությունների սովորողների շարժունության իրականացման եղանակներից է գործընկեր ուսումնական հաստատություններ, ինչպես նաև, սովորողի անհատական նախաձեռնությամբ, նրանց ուղարկելը՝
 - 1) կրկնակի աստիճանաշնորհման կրթական ծրագրերի (երկու ավարտական փաստաթուղթ) շրջանակներում ուսանելու.
 - 2) համատեղ աստիճանաշնորհման կրթական ծրագրերով (մեկ վկայականով) ուսանելու.
 - 3) միջբուհական համագործակցության, այդ թվում՝ ակադեմիական փոխանակման ծրագրերի շրջանակներում ուսանելու.
 - 4) վերապատրաստում (այդ թվում՝ լեզվական) անցնելու.
 - 5) ուսումնական (հետազոտական, արտադրական) պրակտիկա անցնելու:
7. Հավակնորդների ընտրությունը կատարվում է մրցութային եղանակով՝ հաշվի առնելով նաև նրանց ակադեմիական առաջադիմությունը և ընդունող կողմի լեզվի (կամ օտար լեզվի) իմացությունը:

8. Շարժունության ծրագրին մասնակցելու նպատակով՝ սովորողի և ուղարկող ու ընդունող ուսումնական հաստատությունների միջև կնքվում է եռակողմ կրթական համաձայնագիր: Համաձայնագրում նշվում են այն առարկաները, որոնք սովորողները պետք է ուսանեն ընդունող ուսումնական հաստատությունում: Միաժամանակ նշվում են ակադեմիական տարբերությունների մարման ժամկետների վերաբերյալ սովորողի պարտավորությունները:
9. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:
10. ՄՈՒՀ-ում ուսուցման ժամկետի ավարտից հետո ուսանողն իր ուսումնասիրած առարկաների և պարապմունքների ցանկը, ինչպես նաև ստացած կրեդիտներն ու գնահատականները հաստատող ակադեմիական տեղեկանքը պետք է ներկայացնի ՄՈՒՀ՝ ակադեմիական ճանաչման մասին փաստաթուղթը նախապատրաստելու համար:

III. Ներուհական տեղափոխություն

11. Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում սովորող ուսանողների տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո:
12. Ձինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ՄՈՒՀ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում: Հեռակա (առկա) բաժիններից առկա (հեռակա) բաժիններ տեղափոխումը թույլատրվում է առաջին կուրսն ավարտելուց հետո՝ առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի:
13. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի և ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է:
14. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական (մոդուլների) տարբերությունները և առարկաների (մոդուլների) առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգաքննություններ) համարվում են ակադեմիական պարտքեր, եթե առարկայական (մոդուլների) կրեդիտների տարբերությունը գերազանցում է 30 տոկոսը կամ 18 կրեդիտը:
15. Չի թույլատրվում նպատակային տեղերում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ մասնագիտությամբ ուսումնառության:

16. Տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում:
17. Տեղափոխվող ուսանողը սահմանված ժամկետում դիմում է ներկայացնում ռեկտորին՝ համապատասխան խնդրանքով, հիմնավորված պատճառաբանությամբ:
18. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի և որակավորման աստիճանների) շրջանակում: Դիմումները քննարկվում են ռեկտորատի նիստում և ռեկտորատի որոշումը դառնում է ռեկտորի հրամանի հիմքը:
19. Եթե տվյալ ազատ տեղին հավակնողների թիվը մեկից ավելի է, անց է կացվում մրցույթ, որտեղ առաջնահերթությունը տրվում է.
 - 1)մասնագիտական առարկաներից առավել բարձր միջին որակական գնահատական ունեցողներին
 - 2)զյուղական դպրոցներում տվյալ մասնագիտությամբ աշխատող ուսուցիչներին /հեռակա ուսուցման համակարգում/
 - 3)հայկական բանակում ծառայածներին:
20. Տեղափոխություն կատարելիս պետք է պահպանել ուսումնական ծրագրերի միջև եղած տարբերությունը՝ մեկ ուսումնական տարին չգերազանցելու պարտադիր պահանջը:
21. Տեղափոխվող ուսանողի համար տրվում է կցագրման հրաման. «Ուսանող -----ին ուսուցման ----- մասնագիտության ----- կուրսից _____կիսամյակից տեղափոխման կարգով ընդունել/կցագրել/ -----ուսուցման համակարգի ----- մասնագիտության ----- կուրս_____կիսամյակ, վճարովի համակարգում»:
22. Հրամանի 2-րդ ենթակետում նշվում են առաջացած առարկայական քննական տարբերությունները (ակադեմիական պարտք) և հանձնման ժամկետը: Առարկայական քննական տարբերությունների համար սահմանվում է մարման մեկամսյա ժամկետ:
23. Տեղափոխությունը կատարվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Հաջորդ ուսումնական տարվանից կարող են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգի» համաձայն մասնակցել փոխատեղման գործընթացին:
24. Ուսանողը հրամանագրվում է տվյալ կուրսում սահմանված ժամանակացույցով առարկայական տարբերությունները հանձնելուց, պայմանագիրը կնքելուց, տվյալ կիսամյակի վարձավճարը մուծելուց հետո:
- 25.ՄՈՒՀ-ի ռեկտորը տեղափոխվող ուսանողին տվյալ կիսամյակում ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների

ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, ըստ տվյալ ՄՈՒՀ-ում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի: /Հավելված 1/:

26. Դեկանատի և հաշվապահության կողմից լրացվում է տեղեկանք /հավելված 1/, որտեղ սահմանվում են ուսումնասիրվող առարկաները, կերդիտները և վերականգնման կիսամյակի վարձավճարը: Տեղեկանքին ծանոթանալու վերաբերյալ նշագրում է կատարում նաև ուսանողը: Տեղեկանքը համարվում է հիմնական հրամանի հիմք:

27. Դեկանատի կողմից ուսանողին տրվում է նոր ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

28. Կցագրման հրամանով սահմանված գործառույթները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում այդ հրամանը չեղյալ է ճանաչվում:

IV. Այլ բուհից ՎՊՄԻ ուսանողի տեղափոխությունը

29. ՄՈՒՀ-ը կարող են տեղափոխվել միայն պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրված մասնագիտությունների սովորողները: Չի թույլատրվում ըստ մասնագիտությունների հավատարմագրված՝ կրթական ծրագրեր չունեցող ոչ պետական բուհերից ուսանողի տեղափոխությունը:

30. Տեղափոխության մասին ուսանողների դիմումներն ընդունվում են համապատասխան ձևով ուսուցման կիսամյակների ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող 2 շաբաթվա ընթացքում: Դիմումները քննության են առնվում ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

31. Տեղափոխվող անձը ուսումը շարունակելու խնդրանքով /անձնական դիմում/, դիմում է ինստիտուտի ռեկտորին՝ կցելով սովորած բուհի կողմից տրամադրված ակադեմիական տեղեկանքը: Չի թույլատրվում բակալավրի կրթական ծրագրով առաջին և ավարտական կուրսերում սովորող ուսանողների տեղափոխությունը: Մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողների տեղափոխությունը թույլատրվում է առաջին կիսամյակի ավարտից հետո:

33. Չի թույլատրվում նպատակային տեղերում ընդունված ուսանողների տեղափոխումն այլ բուհ կամ այլ մասնագիտությամբ ուսումնառության:

34. Ձինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ՄՈՒՀ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում: Հեռակա (առկա) բաժիններից առկա (հեռակա) բաժիններ տեղափոխությունը թույլատրվում է առաջին կուրսն ավարտելուց հետո՝ առանց պարտադիր ժամկետային զինվորական ծառայության տարկետման իրավունքի:

35. Տեղափոխությունը կատարվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Տեղափոխված ուսանողները հրամանագրվում են միայն վճարովի համակարգում՝ հաջորդ ուսումնական տարվանից Հայաստանի Հանրապետության բուհերում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու կարգով սահմանված փոխատեղմանը մասնակցելու իրավունքով:

36. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է, եթե տեղափոխման պահին ուսումնառած ծրագրի և ընդունող ծրագրի բովանդակությունների տարբերությամբ պայմանավորված՝ առարկայական տարբերությունների թիվը չի գերազանցում 20 կրեդիտը: Հակառակ պարագայում ուսանողին առաջարկվում է փոխադրվել ավելի ցածր կիսամյակում կամ այլ հարակից մասնագիտությամբ սովորելու, որի դեպքում առարկայական անհամապատասխանությունների նշված պահանջը բավարարվում է: Ուսանողը պետք է ուսումնառի և հանձնի գոյացած տարբերությունները՝ ՍՈՒՀ-ի կողմից սահմանված անհատական ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ կիսամյակի քննաշրջանի սկիզբը:
37. Ձինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ՍՈՒՀ ընդունված ուսանողների տեղափոխության դեպքում տրամադրված տարկետման իրավունքի փոփոխություն չի կատարվում:
38. Օտարերկրյա բուհերից ուսանողների տեղափոխության դեպքում հանձնման ենթակա ստուգարքների և քննությունների թվի մեջ չեն ներառվում հայագիտական առարկաները: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ սովորողն օտարերկրյա բուհում, որպես մասնագիտական, ուսումնասիրել է հայագիտական առարկաներ, ինչպես նաև տեղափոխվող բուհում ընտրել է հայագիտական մասնագիտություններ:
39. Տարբեր պատճառներով գոյացած առարկայական (մոդուլների) տարբերությունները և առարկաների (մոդուլների) առանձին բաժինները (ուսումնական պլանների տարբերություններ, չհանձնած քննություններ և ստուգարքներ) համարվում են ակադեմիական պարտքեր, եթե առարկայական (մոդուլների) կրեդիտների տարբերությունը գերազանցում է 30 տոկոսը կամ 18 կրեդիտը:
40. Ուսանողի տեղափոխությունը թույլատրվում է տվյալ մասնագիտության գծով լիցենզիայով հատկացված ընդունելության սահմանային տեղերի (ըստ ուսուցման ձևերի և որակավորման աստիճանների) շրջանակում: Ղիմունները քննարկվում են ռեկտորատի նիստում և ռեկտորատի որոշումը դառնում է ռեկտորի հրամանի հիմքը:
41. Եթե տվյալ ազատ տեղին հավակնողների թիվը մեկից ավելի է, ապա կազմակերպվում է ատեստավորում և անց է կացվում մրցույթ, որտեղ առաջնահերթությունը տրվում է.
- 1) առավել բարձր միջին որակական գնահատական ունեցողին
 - 2) տվյալ մասնագիտության ընդհանուր մասնագիտական առարկաների միջին որակական գնահատական ունեցողին
 - 3) հավասար պայմանների դեպքում կատարվում է գիտելիքի ստուգում թեստավորման եղանակով:
42. Տեղափոխությունը կատարելիս պետք է պահպանել ուսումնական ծրագրերի միջև եղած տարբերությունը՝ մեկ ուսումնական տարին չգերազանցելու պարտադիր պահանջը:
43. Տեղափոխման դիմումի քննարկումից հետո դրական կարծիքի դեպքում ռեկտորը տալիս է կցագրման հրաման/ժամանակավոր հրամանագրում/, որի մեջ նշվում են նաև առարկայական

քննական տարբերությունները, ակադեմիական պարտքերի/առարկայական տարբերությունների/ մարման մեկամսյա անհատական ժամանակացույցը:

44. Տեղափոխության մասին հրամանում կատարվում է հետևյալ գրառումը՝ «_____ -ին _____ բուհից տեղափոխման կարգով ընդունել/կցագրել/ _____ ֆակուլտետի _____ մասնագիտության _____ կուրս՝ _____ ուսուցման ձևով, վճարովի (անվճար) սկզբունքով»:

45. Հրամանի 2-րդ ենթակետում նշվում են առաջացած առարկայական քննական տարբերությունները (ակադեմիական պարտք) և հանձնման ժամկետը: Առարկայական քննական տարբերությունների համար սահմանվում է մարման մեկամսյա ժամկետ:

46. Կցագրված ուսանողին թույլատրվում է մասնակցել համապատասխան խմբի ակադեմիական ուսումնական պարապմունքներին:

47. Տեղափոխվող ուսանողին բուհը տալիս է սահմանված նմուշի տեղեկանք /հավելված 2/, որպեսզի իր նախկին բուհից ներկայացնի ազատման մասին հրամանի պատճենը, սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանքը, միջնակարգ կրթության ավարտական վկայականը, անձնական գործի փաստաթղթերը և ընդունելության քննություններին առնչվող փաստաթղթերը: Ուսանողը առձեռն ներկայացնում է կամ նախկին բուհը փոստով առաքում է նշված փաստաթղթերը և բուհում կազմվում է ուսանողի նոր անձնական գործ:

48. Մեկամսյա ժամկետի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում տրվում է հիմնական հրաման: Ռեսանողը հրամանագրվում է տվյալ կուրսում սահմանված ժամանակացույցով առարկայական տարբերությունները հանձնելուց, պայմանագիրը կնքելուց, տվյալ կիսամյակի վարձավճարը մուծելուց հետո, նաև նախկին բուհից անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

49. ՄՈՒՀ-ի ռեկտորը տեղափոխվող ուսանողին տվյալ կիսամյակում ազատում է նախկինում ուսումնասիրած և համապատասխան կրեդիտներ հավաքած առանձին առարկաների ուսումնական պարապմունքներից: Ուսանողը պարտավոր է վճարել միայն այն առարկաների ուսումնական պարապմունքների համար, որոնց հաճախելու է, ըստ տվյալ ՄՈՒՀ-ում տվյալ մասնագիտության համար գործող մեկ կրեդիտի արժեքի: /Հավելված 2/

50. Դեկանատի և հաշվապահության կողմից լրացվում է տեղեկանք /հավելված 3/, որտեղ սահմանվում են ուսումնասիրվող առարկաները, կրեդիտները և վերականգնման կիսամյակի վարձավճարը: Տեղեկանքին ծանոթանալու վերաբերյալ նշագրում է կատարում նաև ուսանողը: Տեղեկանքը համարվում է հիմնական հրամանի հիմք:

51. Դեկանատի կողմից ուսանողին տրվում է ուսանողական տոմս և ստուգման գրքույկ:

52. Կցագրման հրամանով սահմանված գործառույթները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում այդ **հրամանը չեղյալ է համարվում:**

V. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲՈՒՅԵՐԻՑ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 55. Օտարերկրյա պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններից ուսանողների տեղափոխությունն իրականացվում է վճարովի ուսուցման սկզբունքով: Օտարերկրյա բուհ միջպետական համաձայնագրերով ուսման գործուղված և առողջական վիճակի կամ ուսման գործընթացը խոչընդոտող այլ անհաղթահարելի հանգամանքների պատճառով Հայաստանի Հանրապետություն վերադարձող ուսանողները, ՄՈՒՀ-ի ռեկտորի առաջարկությամբ և նախարարության համաձայնությամբ, ուսուցումը կարող են շարունակել անվճար սկզբունքով:
- 56. ՄՈՒՀ-ը դրական կարծիքի դեպքում նախարարություն է ներկայացնում ուսանողի ակադեմիական տեղեկանքը: Տեղափոխության մասին որոշումն ընդունում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը՝ համապատասխան օտարերկրյա բուհից գրավոր հարցման դրական պատասխան ստանալուց հետո:
- 57. Ուսանողի տեղափոխությունն իրականացվում է սույն կարգի IV մասով սահմանված դրույթներին համապատասխան: Եթե ուսանողի անձնական գործն առաքման ենթակա չէ, ապա դրա մասին ՄՈՒՀ-ին հղվում է համապատասխան փաստաթուղթ, իսկ ուսանողի հրամանագրումը կատարվում է նրա դիմումի և ակադեմիական տեղեկանքի հիման վրա:

Հավելված 1

Տվյալ մասնագիտության և կուրսի համար մեկ կրեդիտի արժեքը որոշվում է.

1.առկա ուսուցման համակարգում.

ա. ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաներ» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ», «Ընդհանուր առողջապահական առարկաներ» բլոկների /Ա խումբ/ առարկաների համար.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐժԵՔԸ} = \frac{\text{Վ միջին}}{60}$$

$$\text{Վ միջին} = \frac{\text{Առկա ուսուցման համակարգի համար լիցենզիայով հաստատված տեղերի քանակով վերջին ուսումնական տարվա համար հաստատված առկա բաժինների ուսման վճարների չափով սղասվելիք գումարը}}{\text{Առկա ուսուցման համակարգի սվյալ ուսումնական տարվա հայտարարված մասնագիտությունների համար լիցենզիայով հաստատված տեղերի ընդհանուր քանակը}}$$

որտեղ՝

60-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

բ. ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ» և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների /Բ խումբ/ առարկաների և «Այլ բաղադրիչներ» 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1 \text{ ԿՐԵՂԻՏԻ ԱՐԺԵՔԸ} = \frac{S \text{ Վ}}{60}$$

որտեղ՝

SՎ-ն՝ Տարեկան Վարձն է՝ համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի
60-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

2. հեռակա ուսուցման համակարգում.

ա) ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաներ» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ» բլոկների /Ա խումբ/ առարկաների համար.

$$1 \text{ ԿՐԵՂԻՏԻ ԱՐԺԵՔԸ} = \frac{\text{Վ միջին}}{48}$$

$$\text{Վ միջին} = \frac{\text{Հեռակա ուսուցման համակարգի համար լիցենզիայով հաստատված տեղերի քանակով վերջին ուսումնական տարվա համար հաստատված առկա բաժինների ուսման վճարների չափով ապավելիք գումարը}}{\text{Հեռակա ուսուցման համակարգի տվյալ ուսուցման տարվա հայտարարված մասնագիտությունների համար լիցենզիայով հաստատված տեղերի ընդհանուր քանակը}}$$

որտեղ՝

48-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

բ) ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ» և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների /Բ խումբ/ առարկաների և «Այլ բաղադրիչներ» 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1 \text{ ԿՐԵՂԻՏԻ ԱՐԺԵՔԸ} = \frac{S \text{ Վ}}{48}$$

որտեղ՝

SՎ-ն՝ Տարեկան Վարձն է՝ համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի

48-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

Տվյալ մասնագիտության և կուրսի համար մեկ կրեդիտի արժեքը որոշվում է.

1) առկա ուսուցման համակարգում.

ա. ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաներ» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ», «Ընդհանուր առողջապահական առարկաներ» բլոկների /Ա խումբ/ առարկաների համար.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔ} = \frac{\text{Վ միջին}}{60}$$

$$\text{Վ միջին} = \frac{\text{Առկա ուսուցման համակարգի համար լիցենզիայով հաստատված տեղերի քանակով վերջին ուսումնական տարվա համար հաստատված առկա բաժինների ուսման վճարների չափով սպասվելիք գումարը}}{\text{Առկա ուսուցման համակարգի տվյալ ուսումնական տարվա հայտարարված մասնագիտությունների համար լիցենզիայով հաստատված տեղերի ընդհանուր քանակը}}$$

որտեղ`

60-ը` 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

բ. ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ» և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների /Բ խումբ/ առարկաների և «Այլ բաղադրիչներ» 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔ} = \frac{S \text{ Վ}}{60}$$

որտեղ`

SՎ-ն` Տարեկան Վարձն է` համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի
60-ը` 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

2) հեռակա ուսուցման համակարգում.

ա) ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաներ» և «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկաներ» բլոկների /Ա խումբ/ առարկաների համար.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔ} = \frac{\text{Վ միջին}}{48}$$

$$\text{Վ միջին} = \frac{\text{Հեռակա ուսուցման համակարգի համար լիցենզիայով հաստատված տեղերի քանակով վերջին ուսումնական տարվա համար հաստատված առկա բաժինների ուսման վճարների չափով սպասվելիք գումարը}}{\text{Հեռակա ուսուցման համակարգի տվյալ ուսումնական տարվա հայտարարված մասնագիտությունների համար լիցենզիայով հաստատված տեղերի ընդհանուր քանակը}}$$

որտեղ`

48-ը` 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

բ) ուսումնական պլանով նախատեսված «Ընդհանուր մասնագիտական առարկաներ»
և «Հատուկ մասնագիտական առարկաներ» բլոկների /Բ խումբ/ առարկաների և
«Այլ բաղադրիչներ» 1 կրեդիտի արժեքը որոշվում է.

$$1 \text{ ԿՐԵԴԻՏԻ ԱՐԺԵՔ} = \frac{ՏՎ}{48}$$

որտեղ՝

ՏՎ-ն՝ Տարեկան Վարձն է՝ համաձայն ուսանողի հետ կնքված պայմանագրի
48-ը՝ 1 ուսումնական տարում հատկացվող կրեդիտների քանակն է:

ՏԵՂԵԿԱԼՔ
201 - 201 ուս. տարվա _____ կիսամյակում
ուսումնասիրվող առարկաների և վարձավճարի վերաբերյալ

_____ մասնագիտության _____ ուսուցման
 /մասնագիտության անվանումը/ /առկա, հեռակա/

համակարգի _____ կուրսում 2012թ. թիվ _____ հրամանով վերականգնված և
 /կուրսը/ /հրամանի համարը/

կցագրված ուսանող _____ - ը
 / անունը, հայրանունը, ազգանունը/

201 -201 ուս. տարվա _____ կիսամյակում պետք է ուսումնասիրի ներքոհիշյալ
 առարկաները.

Հ/հ	Ուսումնասիրվող առարկաները	Առարկան ըստ ուսումնական պլանի բյուկների	Կրեդիտ ը
		<ul style="list-style-type: none"> • «Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկա» /Ա/ • «Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական առարկա» /Ա/ • «Ընդհանուր առողջապահական առարկա» /Բ/ • «Ընդհանուր մասնագիտական առարկա» /Բ/ • «Հատուկ մասնագիտական առարկա» /Բ/ • «Այլ բաղադրիչ» /Բ/ 	

_____ ֆակուլտետի դեկան _____ /
 /ստորագրություն/ / անունը, ազգանունը/

_____ - ի 2012թ. թիվ _____
 / Ուսանող անունը, հայրանունը, ազգանունը/

հրամանով սահմանված _____ դրան վարձավճարից 201 -201 ուս.
 տարվա _____ կիսամյակում պետք է վճարի _____ դրամ*:

Նախկին պարտք _____ դրամ

Ընդամենը _____ դրամ

Գլխավոր հաշվապահ _____ /
 /ստորագրություն/ / անունը, ազգանունը/

Տեղեկացված են** _____ /
 /ստորագրություն/ / Ուսանող անունը, հայրանունը, ազգանունը/

Ծանոթություն.*Վերականգնման կիսամյակի վարձավճարը սահմանվում է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման(ազատման) և վերականգնման» կարգի /Կրթության և գիտության նախարարի 2011թ. նոյեմբերի 17-ի թիվ 1242-Ն հրաման/ 5-րդ կետի համաձայն:

**Հաջորդ կիսամյակների վարձավճարը սահմանվում է վերականգնման հրամանով և պայմանագրով:

Տեղեկանք

Տրվում է _____ -ին՝ այն մասին, որ նրան
անուն, ազգանուն, հայրանունը

_____ կողմից տրված _____
բուհի լրիվ անվանումը

ստուգման գրքույկի պատճենի և դիմումի համաձայն թույլատրվել էր մասնակցելու
ատեստավորման գործընթացին, որը հաջողությամբ նա անցել է:

_____ -ը կիրամանագրվի
անուն, ազգանուն, հայրանուն

_____ ուսուցման
ընդունող բուհի և ֆակուլտետի լրիվ անվանումը ասլա, հեռակա

_____ կուրս _____ մասնագիտության գծով,
_____ սկզբունքով, _____ ակադեմիական տեղեկանք, միջնակարգ
կրթության վկայականը, ներկայացնելուց հետո:

Ռեկտոր _____

Կ.Տ.

_____ 20 թ. _____